



20 Մարտ 1993

Գերաշնորհ Տ. Խաժակ Սրբ. Պարսամեան
Առաջնորդ՝ Հիւսիսայի Ամերիկայի Արեւելեան Թեմին
620 Երկրորդ Պողոտայ
Նիւ Եորք, Նիւ Եորք 10016-4885

Յարգելի Սրբազան Հայր,

Այս գրութեամբ կ'ուզեմ Ձեզի հաղորդել որ մեր Եկեղեցւոյ Տարեկան Ծխական Ժողովը գումարուեցաւ Կիրակի, 28 Փետրուար 1993 ճաշու Ժամերգութենէն ետք, ժամը 1.00-ին: Ներկայ գտնուեցան իրենց լման տուրքերը վճարած հարիւր չորս անդամներէն յիսուն եւ մէկը գոյացնելով մեծամասնութիւն (ներկայ անդամներուն համաձայնութեամբ): Օրուան դիւանը կը բաղկանար Բիչըրտ Արսլանեանէ որպէս Ատենապետ եւ Սեմորա Արսլանեանէ Ատենադպիրի պաշտօնով:

3) Գաղտնի քուէարկութեամբ եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի անդամ ընտրուեցան հետեւեալ անձինք՝ Անտոն Երանոսեան երեսուն եւ ինը քուէով, Արեգ Թորոսեան քսան եւ ինը քուէով, Տայվրտ Անտոնեան քսան եւ վեց քուէով, իսկ որպէս փոխանորդ Սոնա Գարօլլանեան քսան եւ չորս քուէով:

Եկեղեցւոյս պատգամատիրը՝ Ճէք Հաչերեան վերընտրուեցաւ երեսուն եւ հինգ քուէով իսկ որպէս փոխանորդ Արա Պաղտասարեան տասն եւ երկու քուէով: Ընտրողական Յանձնախումբին ընտրուեցան Բասրն Արսլանեան երեսուն եւ երեք քուէով, Անիդա Արիհանեան քսան եւ չորս քուէով եւ Լուսիլ Անտոնեան տասն եւ ութ քուէով: Հաշուեքննիչ Յանձնախումբին հետեւեալ անձինք ընտրուեցան՝ Արշալիք Անտոնեան երեսուն եւ հինգ քուէով, Ճէյ Պաղտասարեան երեսուն եւ չորս քուէով եւ Շերլլ Արսլանեան քսան եւ վեց քուէով:

Ուստի Ձեզմէ կը խնդրեմ որ բարեհաճիք վաւերացնել վերոյիշեալ ընտրութիւնները որպէսզի կարենանք մոր դիւանը ընտրել:

Ընդունեցէ՛ք մեր բարեպաշտ ժողովրդեան կանխապայտ շնորհակալութիւններն ու բարեմաղթութիւնները:

Յարգանքով՝

Նորայր Սրկ. Օտապաշեան
Հոգեւոր Մատակարար

ST. GREGORY OF NAREK ARMENIAN CHURCH
678 Richmond Road
Richmond Heights, Ohio 44143
(216) 381-6590